



# ՄԻԶԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԶԵՎ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՉԱԾՈՂՄՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հռոմեակաթոլիկ և Հին Արևելյան Եկեղեցիների միջև Աստվածարանական Երկխոսության Միջազգային Համագույն Հանձնաժողովը սույն թվականի հունվարի 26-29-ը Հռոմում ունեցավ իր երկրորդ հանդիպումը՝ համանախազահորյամբ Քրիստոնեական Միությունը Խրախոսող Պապական Խորհրդի հախազահ Նորին Սրբազնություն Կարդինալ Վալքեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սինոդի Գլխավոր Քարտուղար, Դամիեթի Մերքրուպուլիպ Նորին Սրբազնություն Ամբա Բիշոյի:

Առաջին հանդիպումը դեղի էր ունեցել 2004 թվականի հունվարի 27-30-ը Կահիրենում (Եգիպտոս):

Հանդիպումը դեղի ունեցավ Հռոմում հյուրընկալությամբ Քրիստոնեական Միությունը Խրախոսող Պապական Խորհրդի, որին ներկա էին Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան հետքեայ Եկեղեցիների պարվիրակները. Հայ Առաքելական Եկեղեցի (Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից՝ Կենդրոնական Եվրոպայի Հայրապետական Պարվիրակ Գերաշնորհ S. Մեսրոպ արքեպոս. Գրիգորյան, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ S. Խաչակ արքեպոս. Պարսամյանը, և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ Մեծի Տանն Կիլիկիո ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ S. Օշական արքեպոս. Զորյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Միջնեղեցական հարաբերությունների պարասխանապոտ Գերաշնորհ S. Նարեկ Եսպ. Ալեմեզյանը), Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիայի Թեսահեղո Ուղղափառ Եկեղեցի, Շնորհի Մալանկարա Ասորի Ուղղափառ Եկեղեցի և Էրիթրեայի Ուղղափառ Թեսահեղո Եկեղեցի:

Հին Արևելյան Եկեղեցիների ներկայացուցիչներն իրենց առանձին նախապարհասրական համարդատմ ունեցան սույն թվականի հունվարի 25-ին, երեքշաբթի օրը: Երկու պարվիրակություններն էլ ունեցան լրացուցիչ առանձին հանդիպումներ Երկխոսության ընթացքում:

Հունվարի 28-ին, ուրբաթ օրը, Հանճնաժողովի անդամներին ընդունեց Նորին Սրբություն Հովհաննես-Դողոս Բ Պապը: Ուրբաթ օրը, հունվարի 28-ին, հանճնաժողովը հրավիրվեց մասնակցելու երեկոյան ժամերգության և ճաշի Ս. Անսելմի թենեղիկոյան Միարանությունում:

Քննարկման զիսավոր թեմաները հեքույաներն էին. ա) Հաղորդության ընկալումը, Հաղորդության բաղադրիչ փարբերը, բ) Մասնակի և Ընդհանրական Հաղորդություն, Քոյլ Եկեղեցիների և Եկեղեցական Ընդհանիքների նշանակությունը, գ) Ամբողջական Հաղորդություն և Հաղորդության Աստիճաններ, Համընդհանուր Էկումենիկ Նպատակ:

Հանդիպման ընթացքում Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից ներկայացվեցին հետևյալ գեկույցները. ա) «Եկեղեցին իրեն Հաղորդություն վաղ Քրիստոնեական Մտածողությամբ» (Հայր Մարկ Շերիդան), բ) «Հաղորդություն - Քոյլ Եկեղեցիներ - Եկեղեցական Ընդհանիքներ» (Մեսրոպ արքեպս. Գրիգորյան), գ) «Ամբողջական Հաղորդություն և Հաղորդության Աստիճաններ, Համընդհանուր Էկումենիկ Նպատակ» (Հայր Ֆիլիպ Լուիսին, Մեսրոպալիփ Ամբա Թիջոյ և Հայր Շնուրա Մահեր), դ) «Մասնավոր Եկեղեցի/Ընդհանրական Եկեղեցի, Քոյլ Եկեղեցիներ, Եկեղեցական Ընդհանիքներ» (Հայր Փոլ Ռուիսանա), ե) Հաղորդության ընկալումը, Հաղորդության բաղկացուցիչ փարբերը (Հայր Մեգարե Թիլոյ Սեյֆե Սելասիե Յոհաննես և Լիքուե Գիրույան Գևորգչ Գուաշին):

Հիագումար նիստերի ընթացքում դեղի ունեցած գեկույցների քննարկումները թույլ գվեցին մասնակիցներին կապարել հետևյալ եզրահանգում-հասպարումները.

1. Եկեղեցին իր իսկ բնությամբ Հաղորդություն է, որի ակունքն ու նախօրինակը Ս. Երրորդության՝ Տոր, Որոր և Սուրբ Հոգու Հաղորդությունն է (communio): Առաջնորդյան (primary) հարցը կուտումնասիրվի հետագայում:

2. Հաղորդության բաղադրիչ փարբերի մեջ մտնում են.

ա. Առաքելական հավաքոր՝ ապրված ավանդությամբ և արքահայրված Սուրբ Գրքում, առաջին երեք Տիեզերաժողովները և Նիկո-Կոստանդնոպոլսյան հանգանակը: Մենք հավաքում ենք Հիսուս Քրիստոսի՝ Ասվծու Մարմնացյալ Բանին, որ ճշմարիդ Ասվված է և ճշմարիդ մարդ, մենք պատվում ենք Ս. Կույս Մարիամին որպես Ասրվածածին:

բ. Յոթ խորհուրդների կապարումը (մկրտություն, դրոշմ, ապաշխարություն, հաղորդություն, ծեռնադրություն, պատկ, երկանդների օծում). մենք հավաքում ենք, որ մկրտությունն էական է փրկության համար, ինչ վերաբերում է Հաղորդությանը, հավաքում ենք, որ այն Հիսուս Քրիստոսի ճշմարիդ Մարմինն ու Արյունն է:

գ. Առաքելական հաղորդականությամբ ծեռնադրված սպասավորությունը:

Սակայն Կաթոլիկ տեսանկյունից մկրտության՝ փոխադարձ ընդունման հարցը կըննարկվի հետագայում:

3. Ծնորհիվ Հաղորդության բազմաթիվ ընդհանուր գրարեքի՝ Կաթոլիկ Եկեղեցին օգտագործում է հերկյալ արտահայտությունները. «իրական, թեև ոչ ամրողական հաղորդություն» և «հաղորդության ասփիճաններ»։ Բայց Դիմ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների գեսանկյունից այս գերմինները հերազա ուսումնասիրության կարիք ունեն։
4. Դիմ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, միմյանց հետ լինելով ամրողական հաղորդության մեջ և հավաքրի, և խորհուրդների առումով, իրենց միությունը բնորոշում են «Եկեղեցական ընդունիք» գերմինով։ Բայց Կաթոլիկ Եկեղեցու գեսանկյունից այս հասկացությունը հերազա ուսումնասիրության կարիք ունի, քանի որ այս բնորոշումը Կաթոլիկների Եկեղեցու ավանդության մաս չի կազմում։

Որոշվեց, որ Միջազգային Համագործակցության կամաց համաշխատ հաջորդ համայնքումը պետք է գելի ունենա 2006 թ. հունվարի 25-31-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության հյուրընկալությամբ։

**Ցուրաքանչյուր կողմից զեկույցներ կպարբասարվեն հերկյալ հարցերի շուրջ**

1. Եպիսկոպոսները՝ ըստ Առաքելական հաջորդականության
2. Առաջնության և ժողովականության (Synodality/Conciliarity) հարցը
3. Տեղական և դիոսկրետական ժողովներ (նրանց եկեղեցարանական իմաստը)։

**ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆԹԱՆ  
Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ**